

ՉԷՅՆԻ ՅԱՆՈՂԱԾ Է ՀՍԱՌՉԵԼ ԹՈՒՐԵՐԸ

Թրքական տեղեկատվական միջոցները երկ կայտնեցին, թե Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Տիբ Չէյնի ծախսողեցաւ համոզել թուրք պետական պատասխանատուները, ԱՖ-դանիստանի մէջ «Թալեպան» շարժումին դէմ կռուելու ուղղութեամբ: Տեղին է յիշել, որ Չէյնի Թուրքիա ժամանած էր այդ երկրի բարձրաստիճան պատասխանատուներուն հետ խօսակցութիւններ կատարելու համար իրանեան կորիզային թղթածրարին եւ դէպի հարաւային Աֆղանիստան թրքական ուժեր առաքելու նկրթերուն շուրջ, Իրաքի եւ Զոնտրոյի մէջ տիրող իրավիճակներուն եւ Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան գործընթացի կողքին:

ԱՐԱՐ 15 ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳԵՐԱՍՏԻՃԱՆԻՆ

Չինական մամուլը «Շինխուա» պաշտօնական գործակալութիւնը, իր տեղեկութիւնները սուրիական լաւատեղեակ աղբիւրներէ քաղելով հարդորեց, թէ արաբ 15 ղեկավարներ իրենց մասնակցութիւնը պիտի բերեն արաբական 20-րդ գերաստիճանին, որ Դամասկոսի մէջ պիտի կայանայ ընթացիկ Մարտ ամսուան 29-ին եւ 30-ին:

Այդ աղբիւրները, որոնք չյայտնեցին իրենց ինքնութիւնը, նշեցին, թէ Դամասկոս տեղեկացաւ հաստատ ներկայութիւնը Զուլեյթի, Եմէնի, Արաբական Միացեալ Էմիրութեանց, Յորդանանի, Զաթարի, Սուտանի, Իրաքի, Ալճերիոյ, Թունիզի, Լիպիոյ, Պաղեստինի, Սոմալիի, Մալիի, Դիբալի, Ճիպուտի եւ Զոմոր Կողմերու ղեկավարներուն: Մինչ Պահրէյնի թագաւորը, Չէյնի Համաս պըն Իսա Ալ Խալիֆա ժամադրութիւն ունի Սպիտակ Տան մէջ, յառաջիկայ Գինզաբթի օր:

Մինչ իրաքեան պատուիրակութիւնը պիտի գլխաւորէ վարչապետ Նուրի Մալիքի, իմացուցաւ, թէ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Պան Զի Մուն պիտի ջնասնակցի գագաթաժողովի բացման նիստին:

Վերոնշեալ աղբիւրները ուշադրութեան յանձնեցին, որ Օմանի սուլթանութիւնը սովորութիւն զարձուցած է գերաստիճաններուն ջնասնակցի սուլթան Զալուայի անձով: Նմանապէս Մարոքի թագաւորը, որ Դամասկոս պիտի առաքէ գահաժառանգ իշխանը եւ մեծ պատուիրակութիւն մը: Կը նշուի, որ Ալճերիոյ նախագահ Ապտուլ Ազիզ Գուլթաֆլիքա առաջին կանստը պիտի ըլլայ, յառաջիկայ Ուրբաթ առաւօտուն Դամասկոս:

ԾՈՍՊԱԼԹ ԿԱՆԱՍԻՉՈՑՆԵՐ ԿԸ ՊԱՅՆՁԵ

Ընկերվարական Յառաջդիմական կուսակցութեան պետ, երեսփոխան Ուալիտ Ծոմպալթ պահանջեց կարգ մը կանխա-միջոցներու դիմել, որոնք պիտի նպաստեն քաղաքական, տընտեսական եւ ապրուստային դիրքերը ամրապնդելու եւ պիտի արգիլեն երկիրը դէպի փլուզումի տանելու ճիգերը: Ծոմպալթ սոյն կանխամիջոցները պահանջեց, որովհետեւ շրջանային շահերու թելադրութեան տակ կարգ մը հոսանքներ իրենց իրենց լիազօրած են երկրին կառոյցները եւ սահմանադրական հաստատութիւնները քայքայելու իրաւասութիւն եւ անդամալուծելու միջոցաւ կ'աշխատին երկրին մէջ ստեղծել հաւաքական անօթութեան վիճակ մը:

Ծոմպալթ ըսաւ, թէ անհրաժեշտ է յանդուգն քայլի մը դիմել եւ վերանայիլ ամասնակներու դրութեան, սահմանելով տրամաբանական յանձնում մը: Ան առաջարկեց արմատական քայլերու դիմել ելեկտրականութեան բաշխումին շուրջ եւ կասեցնել պետական սնտուկին ելեկտրականութեան պատճառաւ հսկայական վնասները եւ խտրութիւն չընել ելեկտրականութեան տուրքերը գանձելու մէջ, կարծեք թէ «գոյութիւն ունենար դիմադրութեան համար յատուկ ելեկտրականութիւն, նաեւ դիմադրութեան անջատ ելեկտրականութիւն»: Ծոմպալթ պահանջեց բժախորդներ եւ ամբողջակաւորներ վերակարգաւորել ընկերային ապահովագրութեան ծառայութեան սնտուկին գործունէութիւնը:

Ծոմպալթ նաեւ առաջարկեց լիբանանեան բանակին մէջ ծառայելու փափաքողներուն առջեւ լայն բանալ դուռը, առանց համայնքային կամ յարաւտանական չափանիշներու նկատառումով եւ խտրականութեամբ «մանաւանդ վերջին շրջանին բանակին կարողականութիւնը թուլացնելու փորձերը տեսնել ետք», ըսաւ ան:

Ուալիտ Ծոմպալթ առաջարկեց բանալ զինուորական հիւանդանոց մը, պետական հիւանդանոցին օրինակով: Ան նաեւ պահանջեց Նապաթիէի, հիւսիսի եւ այլ շրջաններու մէջ համալսարաններ բանալ եւ միջոցներ գտնել զօրակցելու զբօսաշրջութեան, պանդոկներուն եւ ճարտարարուեստի մարզերուն, որոնք վերջին երեք տարիներուն պատահած քաղաքական վերիվայրումներուն պատճառաւ լրջօրէն կը տառապին», դիտել տուաւ Ծոմպալթ:

ՎԱՐՉԱՊԵՏ ՍԻՆԻՈՐԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵՆՆԵՆ

Վարչապետ Ֆուատ Սինիորա, երէկ կէսօրէն առաջ, հեռա-

ձայնային հաղորդակցութիւններ ունեցաւ Զուլեյթի արտաքին գործոց նախարար, Չէյնի Մուհամմատ Սապահ Սալէմին, ինչպէս նաեւ Յորդանանի արտաքին գործոց նախարար Սալահտին Պեշիրին հետ:

Յիշեալ երկու երկիրներու արտաքին գործոց նախարարներուն հետ, վարչապետ Սինիորա քննարկեց Լիբանանի ու շըրջանին կացութիւնները, նաեւ արաբական գերաստիճանին վերաբերող հարցեր:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Ք Լիբանան բացակայեցաւ Արաբական գերաստիճանի նախապատրաստութիւններու ծիրին մէջ մայուն ներկայացուցիչներու հանդիպումէն: Իսկ Արաբական Լիկայի մօտ Մեուսական Արաբիոյ դեսպան՝ Ահմետ Ղաթան ըսաւ, թէ ինք պիտի ներկայացնէ իր երկիրը Դամասկոսի գերաստիճանին:

Շիի համայնքը Գերագոյն հորիւորդի փոխ նախագահ Չէյնի Ապտէ Ամիր Զապալան առաջարկեց, որ Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամըր Մուսա լիբանանեան պատուիրակութեան մը ընկերակցութեամբ մասնակցի Դամասկոսի մէջ կայանալիք գերաստիճանին:

Զապալան դատաւարտեց քաղաքական անձնաւորութիւններու հետ հեռատեսիլային ելոյթներու ընթացքին, իբրեւ հրճուանք կամ ուրախութիւն կատարուած զինարձակումները:

Ք Առանց ակնարկելու մասնակցութեան մակարդակին, Նախկին վարչապետ Ռաշիտ Սոլի շեշտեց Լիբանանի մասնակցութիւնը Դամասկոսի մէջ կայանալիք արաբական գերաստիճանին: Իսկ Նախկին նախարար Ուատիյ Ալխազէնի կարծիքով, Դամասկոսի գերաստիճանը արաբական նախաձեռնութեան յաջողութեան վերջին փամփուշտը պիտի ըլլայ. «Կամ այն է, որ գերաստիճանը արագ եւ լուրջ կեցուածք մը կ'որոգեգրէ Լիբանանի հարցով, եւ կամ ալ հարցին լուծումը կը ձգուի Նեպիի Պըրրիի փնտմելու տագնապէն դուրս գալու ճանապարհ մը», ըսաւ Ալխազէն:

Միւս կողմէ, երեսփոխան Ամար Հուրի դիտել տուաւ, թէ այն խօսակցութիւնը որ խորհրդարանի նախագահ՝ Նեպիի Պըրրի կը ծրագրէ շրջապայութեան մը դուրս ելել, կը նշանակէ, թէ ընդդիմութիւնը չունի ինքնուրոյն որոշում եւ կամ անոր մօտ կը բացակայի ինքնուրոյն որոշում առնելու հնարաւորութիւն ըսաւ Հուրի:

Միւս կողմէ, Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ահմետ Ապու Ղեյթ դիտել տուաւ, որ լիբանանեան տագնապին լուծումը կը կախարար արաբական նախաձեռնութեան գործարարութեան մէջ, ինչպէս նաեւ՝ ՄԱԿ-ի թիւ 1559 եւ 1701 բանաձեւերուն գործադրութեամբ:

Ապու Ղեյթ ըսաւ, թէ գերաստիճանին՝ Եգիպտոսի մասնակցութեան մակարդակը որոշուած չէ ներկայիս: Արտաքին գործոց նախարարը ցաւ յայտնեց, որ արաբական գերաստիճանը իրաւօրէն Ե կարգ մը դժուարութիւններու մէջ, անոնց մէջ, յատկապէս՝ լիբանանեան տագնապը:

Ապու Ղեյթ հերքեց ի նպաստ խմբաւորումի մը պաշտպանութեան Եգիպտոսին յղուած ամբաստանութիւնները:

Ք Սուրբ Յարութեան տօնին առիթով իր շնորհակարարական ընդունելութիւններուն ընթացքին պատրիարք Սֆէյր ըսաւ, թէ ոչ ոք գոհ է տիրող իրավիճակէն եւ աւելցուց, որ երկիրը ծանր կացութիւն մը կը բոլորէ, ուր ոչ ոք ի վիճակի է լուծում գտնելու անոր տագնապին:

Պատրիարքը ընդունեց Լիբանանի մօտ Ֆրանսայի գործակալատը Անտուէ Փարսը: Սֆէյր յայտնեց, թէ Ֆրանսա իր կարեւոր ըրաւ բարձր պահելու Լիբանանի արժանապատուութիւնը: Փարսն ըսաւ, թէ Ֆրանսա պիտի շարունակէ իր ճիգերը Լիբանանը դուրս բերելու ներկայի կացութիւնէն եւ Ֆրանսա պիտի շարունակէ մնալ Լիբանանի կողքին:

Ք Մարտ 14-ի ուժերու կրթական հարցերով զբաղուող միաւորներու հանդիպումը իր երկուսն նիստին ընթացքին, քննարկելու ետք երկրին մէջ տիրող ընկերային վիճակը, կառավարութեան պահանջեց միջոցներու դիմել սղաճին դէմ, նաեւ սահմանել ամսականներու տրամաբանական յանձնում մը:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ՆԱԽԱՐԱՐ ԺԱՆ ՕՂԱՍԱՊԵԱՆԻՆ

Երկուշաբթի, 24 Մարտ 2008, երեկոյեան ժամը 5:00-ին, Ս.Դ.Գ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ ատենապետ ընկ. Սարգիս Զափուրեանի, այցելութիւն մը տուաւ պետական նախարար Ժան Օղասապեանին, կառավարական սերայի իր գրասենեակին մէջ:



Աւելի քան մեկուկէս ժամ տեւած տեսակցութեան սկիզբը, Ս.Դ.Գ.Կ.-ի պատուիրակութիւնը նախարար Օղասապեանը շնորհակարտեց Ս. Զատկուսեան տօնին առիթով: Ապա, մտերմիկ մթնոլորտի մը մէջ, կողմերը անխորհրդանշան ձեւով գործ ունեցան Լիբանանի քաղաքական այժմու իրավիճակին եւ քաղաքացիները յուզող ու հետաքրքրող իրատապ հարցերուն շուրջ: Անորաբար կատարուեցաւ նաեւ երկրի տնտեսական ու ելեւմտական վիճակին, շեշտը դրուելով քաղաքացիին առօրեայ ապրուստը դիւրացնելու եւ անոր կրած դժուարութիւնները մեղմացնող քայլեր որդեգրելու անհրաժեշտութեան վրայ:

ՆԱԽԱՐԱՐ ՕՂԱՍԱՊԵԱՆ ԿԸ ԶԳՈՒՇԱՑՆԵ

Վարչական բարգաւաճման հարցերու պետական նախարար Ժան Օղասապեան մտաւախութիւն յայտնեց «առաջին նախագահութեան արձիւն վրայ պարագայիւրը գոյատեւելու վտանգէն, որ ամբողջացուց իր չորրորդ ամիսը»: Ան մտաւախութիւն յայտնեց «խանգարողներու ճիգերուն նկատմամբ, որ այդ պարագայութեան տեսողութիւնը երկարեմ, Պէյրութի կեդրոնին մէջ անճարարեաց եւ անարդարանալի նստացոյցին օրինակով»:

Օղասապեան ուշադրութեան յանձնեց, թէ «անհրաժեշտ է շարունակել քաղաքական քարտաշարը, որ կը մերժէ նախագահական ընտրութեան խանգարումը եւ խորհրդարանին փակումը»: Ան նշեց, թէ արաբական գերաստիճանը Լիբանանի կողմէ պոյքորի ենթարկելու ուղղութիւնը «համեմաշա կ'ընթանայ այն համոզումին հետ, որ ներկայ չգտնուող ունի իր ազդեցիկ կշռոյթը, որ կը հաստատէ կառչածութիւնը նախագահական ընտրութեանց կայացումին եւ Լիբանանի իրաւունքին, որ ներկայումս իր բրիտանեայ նախագահով, միակը արաբական աշխարհին մէջ»: Նախարարը պարզեց, թէ գերաստիճանէն բացակայութիւնը «լաւազոյն պատգամն է, որ Լիբանանի մէջ կացութիւնը անբնական ու անկայուն է եւ կրնայ գահավիժի, նկատի առնելով պարագայութեան վատ անդրադարձները բոլոր մակարդակներուն վրայ: Այս բացակայութիւնը նաեւ կը հաստատէ ազատ լիբանանցիներուն մերժումը՝ լիբանանեան հարցերուն միջամտելու օրինակաւորութիւն տալու անոր, որ արաբական գերաստիճանին նախագահը պիտի ըլլայ եւ ան այն կողմն է, որ կը շարունակէ հաստատութիւնները խանգարել եւ Լիբանանը դէպի ետ տանիլ»:

ԱՐԻՒՆԱԼԻ ՆՈՎՐՈՒՉ

Թուրքիոյ մէջ Նովրուզի (քրտական նոր տարին) տօնակատարութիւնը վերածնունդաւ իսկական պատերազմի: Տօնակատարութեան ընթացքին, քիւրդներու եւ ռուսիկանութեան միջեւ ծագած բախումներուն ժամանակ գոհունեան տնտեսական 5 անձեր: Ուրիշ հարիւրատոններ՝ ստացան մարմնական վնասումներ: Ռուսիկանութիւնը ձեռքարկեց մօտ 226 քիւրտ: Թրքական մամուլին համաձայն Մարտ 21-ին սկսած Նովրուզի տօնակատարութեան ժամանակ ծագած դէպքերը շարունակուած են մինչեւ Մարտ 24:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԵՐԺ ՄԱՐԳՍԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ՄՈՍԿՈՒԱ
Հայաստանի վարչապետ, նորընտիր նախագահ Սերժ Մարգսեան Մոսկուայի մէջ Ռուսիոյ նորընտիր նախագահ Տիմոթի Մեալտեմեի հանդիպման ժամանակ ըսաւ, թէ իր այցը Մոսկուա կը վկայէ հայ-ռուսական յարաբերութիւններու կարեւորութեան մասին:

Մարգսեան յոյս յայտնեց, որ այդ յարաբերութիւնները ապագային աւելի կը զարգանան: Նորընտիր նախագահը իր արտասահմանեան առաջին այցելութիւնը կատարեց Մոսկուա:

ԺՈՂՈՎՈՒՐԳԸ ՍԱՍՈՒՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ԱՋԱՏ ԱՐՉԱԿՈՒՄԸ ԿԸ ՊԱՅՆՁԵ

Հրագրանի մօտակայքը գտնուող Վանատուր գիւղի բնակիչները բողոքի ցոյց մը կազմակերպեցին երէկ եւ պահանջեցին ազատ արձակել երեսփոխան Սասուն Միքայէլեանը:

Սասուն Միքայէլեան ձերբակալուեցաւ Մարտ 12-ին, ժողովրդային անկարգութիւն կազմակերպած ըլլալու յանցանքով:

ՊԱՐՈՅՐ ՀԱՅՐԻԿԵԱՆ ԿԸ ԶԳՈՒՇԱՆԱՅ ԽՕՍԵԼԵ...

Հայաստանի «Ինքնորոշում» միաւորման նախագահ Պարոյր Հայրիկեան նշեց, թէ Մարտ 1-էն ետք Հայաստանի մէջ մարդու իրաւունքները խախտուած են: «Մինչեւ Մարտ 1, հակառակ տիրող լարածութեան, եւ երեւոյթը շատ դրական կը գնահատելի եւ համոզուած էի, որ մենք քայլ մը դէպի առջեւ կ'ընթանանք: Բայց, Մարտ 1-էն ետք եւ՛ քաղաքական հետապնդումներ կան, եւ՛ մարդուն իրաւունքներու ոտնահարումներ: Իսկ այսօրուան կացութիւնը չ'արտօնէր այս մա-

ՈՒՇԻՆԿԹԸՆ ՇԱՀԱԳՐԳՈՒՄԸ Ե ԳԱՐԱԲԱԳԻ ՀԱՐՅԻՆ ԽԱՂԱԳ ԼՈՒՃՈՒՄՎ

«Ուշինկթըն շահագրգռուած է դարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման մէջ», A.N.S. արտալեւնական հեռուստեսիլի ալիքին տուած հարցազրոյցին մէջ յայտնեց Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան Եւրոպայի եւ Եւրասիայի պաշտօնակատար Տանիէլ Ֆրիտ:

Ֆրիտ շեշտեց, թէ Ուշինկթըն՝ Ատրպէյճանը ընդունած է իբրեւ ռազմավարական ընկեր: «Մենք կողմ ենք Ատրպէյճանի հողային ամբողջականութեան: Սակայն, միեւնոյն ժամանակ Ատրպէյճանի հետ համագործակցութեան միջոցաւ կ'ակնկալենք դարաբաղեան խնդիրն գտնել արդար եւ խաղաղ լուծում», ըսաւ Ֆրիտ:

ՔԱԶԻՄԻՐՈՎ ԿԸ ԶԳՈՒՇԱՆԱՅ ԱՏՐՊԵՅՃԱՆԸ

1990-ականներուն, Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման Ռուսիոյ ներկայացուցիչ՝ Վլատիմիր Քազիմիրով դիտել տուաւ, թէ ԵԱՀԿ-ի Մինսքի խումբէն իրաւաբար աւելի պիտի սաստկացնէ Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ լարուածութիւնը: Քազիմիրով ըսաւ, թէ ՄԱԿ-ը պիտի չներգրաւուի Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցին մէջ: Ան Ատրպէյճանին կոչ ուղղեց իրաւաբար ՄԱԿ-ին դիմելու փորձերէն, որովհետեւ

այդօրինակ քայլ մը բացի մագլցումէն ոչ մէկ օգուտ պիտի տայ հակամարտութեան կարգաւորման:

«ՎԱՆՔԸ ԶԵՉՄԵ, «ՌԵՍՏՈՐԱՆ»-Ը ՄԵՉՄԵ...»

Արաբական Միացեալ Էմիրութիւններու գլխաւոր խորհուրդի անդամ եւ Շարժայի իշխան՝ Մուրաբ Պըն Մուհամմէտ Ալ Քասիմ մէկ միլիոն 700 հազար տոլարի գումար մը յատկացնելով ստանձնեց Հաղարձիկի վանքին վերանորոգութիւնը:

Բայց Շարժայի շէյխը աշխարհի միակ բարեսիրտ ու շռայլ գաւազն է, անկասկած: Հայկական լեռնաշխարհն ալ ունի իր շռայլ գաւազները: Շէյխը որքան ալ փորձէ վանքը նորոգել, անպայման կարեւոր բաժին մը կիսատ պիտի ձգէ: Ան հաստատ պիտի մտնայ Հաղարձիկի պատին կից «Նեստորան» կառուցել: Այնպէս, որ հայաստանեան մեծահարուստները տակաւին ընելիք կ'ունենան: Հաղարձիկի վանքը պէտք չէ ձգել բացատարութեան: Վերջին հաշուով, նոր սերունդն ալ պարտաւոր է, ինչ որ բան աւելցնել քրիստոնէական այդ ժառանգութեանը եւ ինչ դարերէն եկած այդ ժառանգութիւնը փոխանցել ապագայ սերունդին:

Այնպէս որ, ինչպէս կ'ըսեն՝ վանքը շէյխն, «Նեստորանը» մեզմէ:

ՍՈՒՐԵՆ ՍՈՒՐԵՆԵԱՆ ՀԱՅԱԳՈՒԼԻ ԴԻՄԵՅ

Հանրապետութիւն կուսակցութեան քաղաքական խորհուրդի անդամ Սուրեն Սուրենեան, որ ձերբակալուած է Փետրուար 25-ին, երկ առաւօտեան հացադուլ յայտարարեց: